## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԾԱԳՐԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԼՐԱԿԱԶՄԻ ԱՄՓՈՓՈԳԻՐ

| NN | Անվանում | Ծանոթա-գրություն |
|---|---|---|
| 1 | Ընդհանուր տվյալներ: Սարքավորումների և նյութերի մասնագիր | Գ-1 |
| 2 | Ջերմային հանգույցի հատակագիծ, կտրվածք 1-1 | Գ-2 |

## ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

| | |
|---|---|
| dy32 (Ø38x2.5) | Նախագծվող գազատար dy32 (Ø38x2.5); տրամագծով |
| | Ջեռուցման տուրբո կաթսա |
| | Խցանային անցումային փական |
| | Խողովակը պարկուճում |
| | Էլեկտրամագնիսական կափույր |
| | Ազդանշանային սարք |

## Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր  Ց Ո Ւ Ց Ո Ւ Մ Ն Ե Ր

Գեղարքունիքի մարզի Վարդաձորի մանկապարտեզի ջերմամատակարաման համակարգի կաթսաների գազամատակարարման ներքին ցանցի նախագիծն իրականացված է Հ.Հ. օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, նախագծման նորմերին և կանոններին, ինչպես նաև նախագծային առաջադրանքին համապատասխան:

Նախագծով նախատեսվում է ջերմային հանգույցում տեղադրել երկու տուրբո կաթսա՝ յուրաքանչյուրը 32կՎտ հզորությամբ:

Գազի մաքսիմալ ծախսը կազմում է 8.0մ³/ժամ:

Գազամատակարարման համար օգտագործվում են պողպատյա ջրագազատար խողովակներ:

Կոռոզիայից պաշտպանելու համար խողովակները յուղաներկել 2 անգամ:

Կաթսաների գազամատակարարման համակարգի անվտանգ շահագործումն ապահովելու նպատակով նախատեսվում է տեղադրել այրվող գազերի ազդանշանային սարք (դետեկտոր): Ազդանշանման համար սահմանված չափանիշները գերազանցելու դեպքում դետեկտորը տալիս է լուսա-ձայնային ազդանշան: Գազի մուտքագծի մոտ դրսից տեղադրված է էլեկտրամագնիսական կափույր, որը վթարային իրավիճակում դետեկտորից ստանալով հաստատուն ելքային իմպուլսներ՝ դադարեցնում է գազի մատակարարումը կաթսաներին:

Փորձարկումից առաջ խողովակները պետք է ենթարկվեն փչամաքրման:

Անհրաժեշտ է գազատարը փորձարկել պնևմատիկորեն՝ ամրությունը և կիպությունը ստուգելու համար:

Հավաքակցումը, փորձարկումը, շահագործման հանձնումը և շահագործումը կատարել համապատասխան գործող նորմերի և կանոնների:

- ՀՀՇՆ IV-12.03.01-04:
- Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում:

## Կաթսաների գազամատակարարման ներքին ցանցի մասնագիր

| №№ | Սարքավորումների և նյութերի անվանումը | Տիպը | Չափման միավորը | Քանակը | Միավորի մասսան |
|---|---|---|---|---|---|
| 1 | Պողպատե ջրագազատար խողովակներ dy32 (Ø38x2.5) ներառյալ ձևավոր մասերը | | գծ.մ | 1.5 | |
| 2 | Պողպատե ջրագազատար խողովակներ dy15, ներառյալ ձևավոր մասերը | | գծ.մ | 3.0 | |
| 3 | Մետաղական ճկախողովակ dy15,  L=0.6մ | | հատ | 2 | |
| 4 | Գազի խցանային փական dy15 | | հատ | 2 | |
| 5 | Խցափակիչ Ø38x2.5 | | հատ | 1 | |
| 6 | Ազդանշանային սարք (դետեկտոր) էլեկտրամագնիսական կափույրով dy32 | | լր-զմ | 1 | |
| 7 | Մետաղական պարկուճ Ø57x3.0, խողովակից, L=0,4մ | | հատ | 1 | |
| 8 | Մետաղական պարկուճ Ø108x4.0 խողովակից, L=0,4մ | | հատ | 2 | |
| 9 | Խողովակների փչամաքրում | | գծ.մ | 4.5 | |
| 10 | Խողովակների պնևմատիկ փորձարկում | | գծ.մ | 4.5 | |
| 11 | Խողովակների ներկում յուղաներկով երկու անգամ | | մ² | 0.5 | |

| | | | |
|---|---|---|---|
| Ծրագրի առաջադրանք՝ TGQ-09 | Վարդաձորի մանկապարտեզի կառուցման համար անհրաժեշտ նախագծային աշխատանքներ | | |
| | Գազամատակարարման ներքին ցանց | ՓՈՒԼ: ԱՆ | ԹԵՐԹ: Գ-1 / ԹԵՐԹԵՐ: 2 |
| Նախագծ. Հ. Ղուկասյան | Ընդհանուր տվյալներ: Սարքավորումների և նյութերի մասնագիր | | |
| Պաշտոն / Ազգանուն / Ստորագր. | | | |

ԻՆՋԻՆԵՐԻՆԳ ԷՎՐՈՍ ՍՊԸ
ENGINEERING EVROS LLC